

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Ասատրաբեկյան



(ստորագրություն)

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՍՇՏԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(վերահաստատված)

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Մուշեղ Աստաբաջյան

(ստորագրություն)



ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 ՀԲԻ գիտական խորհրդին կից մշտական հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության աշխատակարգը սահմանում է Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակն ու խնդիրները, իրավասությունները, գործառույթները, անդամների իրավունքներն ու պարտականությունները, նիստերի ընթացակարգը,
- 1.2 Հանձնաժողովները ստեղծվում են ռեկտորի հրամանով և գործում են Գիտական խորհրդի լիազորության ժամկետում:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1 Հանձնաժողովներն ստեղծվում են ՀԲԻ գործունեության ոլորտների զարգացման հիմնական ուղղությունները մշակելու, Գիտական խորհրդի գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով:
- 2.2 Հանձնաժողովների գործունեության հիմնական խնդիրներն են՝
- 2.3 ապահովել Գիտական խորհրդում քննարկվող օրակարգային հարցերի բազմակողմանի ուսումնասիրությունն ու քննարկման արդյունավետությունը,
- 2.4 կազմակերպել լսումներ և քննարկումներ Գիտական խորհրդի օրակարգային հարցերի վերաբերյալ, ձևավորել առաջարկություններ, եզրակացություններ և կարծիքներ Գիտական խորհուրդ ներկայացնելու համար,
- 2.5 մշակել Գիտական խորհրդի օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը,
- 2.6 իրականացնել Գիտական խորհրդի ուսումնական, գիտական, մեթոդական գործառույթների հետ կապված այլ լիազորություններ:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1 Հանձնաժողովների ձևավորումն ու իրավասությունները կարգավորվում են ՀԲԻ կանոնադրությամբ, Գիտական խորհրդի կանոնակարգով, ռեկտորի հրամաններով և սույն աշխատակարգով:
- 3.2 ՀԲԻ Գիտական խորհրդին կից ստեղծվում են հետևյալ հանձնաժողովները, որոնց կազմերը ձևավորվում են որպես կանոն Գիտական խորհրդի անդամներից.

- 1) Կանոնակարգային համակարգման և կառուցվածքային փոփոխությունների,
- 2) Կրթական ծրագրերի և ուսումնամեթոդական աշխատանքների,
- 3) Միջազգային համագործակցության և արտաքին կապերի,
- 4) Ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման,
- 5) Պատվավոր կոչումների, պարգևատրումների ներկայացման հարցերի:

3.3 Գիտական խորհրդի նախագահը առաջադրում է Հանձնաժողովի նախագահի թեկնածություն և ներկայացնում Գիտական խորհրդի հաստատմանը:

- 1) Հանձնաժողովի նախագահը՝
- 2) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները և նախագահում է Հանձնաժողովի նիստերը,
- 3) Գիտական խորհրդի նիստում ներկայացնում է Հանձնաժողովի կարծիքը քննարկման ենթակա հարցի վերաբերյալ,
- 4) հետևում է Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքին և այդ մասին զեկուցում Գիտական խորհրդին:
- 5) Հանձնաժողովի անդամն իրավասու է ՀԲԻ ցանկացած կառուցվածքային ստորաբաժանումից և պաշտոնատար անձից ստանալ տեղեկություն, որն անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար:
- 6) Հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել հանձնաժողովի նիստերին, կատարել հանձնաժողովի որոշումներն ու հանձնաժողովի նախագահի հանձնարարությունները:

3.4 Գիտական խորհրդի՝ Հանձնաժողովի կազմում չընդգրկված անդամները կարող են մասնակցել հանձնաժողովի նիստին խորհրդատվական ձայնի իրավունքով:

4 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

- 4.1 Հանձնաժողովների գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի նախագահի կամ Գիտական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ:
- 4.2 Հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամկետը որոշում է Հանձնաժողովի նախագահը: Նիստի հրավիրման և օրակարգի մասին Հանձնաժողովի անդամները տեղեկացվում են ոչ ուշ, քան նիստից 2 օր առաջ:
- 4.3 Անհետաձգելի և հրատապ լուծում պահանջող հարցերի քննարկումը կարող է իրականացվել Գիտական խորհրդում՝ առանց հանձնաժողովի կողմից նախնական քննարկման:
- 4.4 Անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել քննարկվող հարցի հետ առնչություն ունեցող Համալսարանի գիտամասնակավարժական կամ վարչական կազմերի ներկայացուցիչներ:
- 4.5 Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրա աշխատանքին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ

մեծամասնությամբ: Չայների հավասարության դեպքում որոշիչը Հանձնաժողովի նախագահի ձայնն է:

4.6 Հանձնաժողովի որոշումը Գիտական խորհրդում հարցի քննարկման համար ունի խորհրդակցական նշանակություն:

4.7 Եթե Հանձնաժողովի անդամը որոշման վերաբերյալ ունի այլ (հատուկ) կարծիք, ապա այն արձանագրվում է և կարող է հնչեցվել Գիտական խորհրդի նիստում տվյալ հարցի քննարկման ժամանակ:

4.8 Հանձնաժողովի նիստերն արձանագրվում և ստորագրվում են Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից: Հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը ներկայացվում է Գիտական խորհրդի քարտուղարին:

5 ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն կարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է Գիտական խորհրդի որոշմամբ:

5.2 Սույն աշխատակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ հաջորդ օրվանից: